ղամախիների տնկարաններով, գեղեցիկ պտղատու այգիներով և ծովանման արտերով, իսկ մօտակայ մակերևոյթը ներկայացնում է հսկայ սարերի և խորդուբորդ ձորերի և բլուրների մի ժխոր թաւշեայ կանաչով ծածկուած։ Այդ սարերն ու բլուրները միանում են և երևան հանում բնութեան հմայիչ տեսարաններ. նայում ես անվերջ հմայիչ այդ տեսարաններին, նրա ծառազարդ ծովանման արտերին և յափշտակւում բնութեան այդ գեղեցիկ պատկերներով։

Այստեղ փողոցները համեմատաբար մաքուր և գեղեցիկ են, շատ տեղերում լայն. տներից շատերը մի կամ երկյարկանի են, բաւական մաքուր և գեղեցիկ շինուած, որոնցից շատերի առաջ կան պարտէզներ։

Գիւղի մէջ, երկու կողմերում շարքով տնկուած ստուերախիտ ուռենիների և կաղամախիների միջով ձգւում է Խանլղի առուն. դա սկիզբ է առնում Շէլկունի դաշտավայրերի փէշից բղխող բազմաթիւ աղբիւրներից և ոլորապտոյտ հոսելով՝ ոռոգում է ամբողջ Ներքին-Խօյգանի դաշտավայրերն և ապա խառնւում է Զայենդէրուդին և այնտեղից թեքւում դէպի Նոր—Զուղա։ Իսկ տրտերի փէշերից, հիւսիս-արևելեան կողմից անցնում է Ներքին առուն. սա սկիզբ է առնում Պօյունուից և անցում Սանգիբարանի միջով։

Ունենալով այսպիսի կազմութիւն, Վերին-Խօյգանը հարուստ է վարելահողերով և ջրով, որոնց շնորհիւ այդ դաշտըն արտադրում է ընտիր հացահատիկներ, ամեն տեսակ պտղատու ծառեր, զանազան բոյսեր և այլ տեսակի բերքեր։

Գիւղի հարաւային կողմում, արևելքից դէպի արևմուտք ուղղութեամբ, իբրև բնական պատնէշ, մեն-մենակ ցցուած է վիթխարի, ժայռոտ և ձիւնածածկ Խօշկարու լեռնաշղթան, որի առջև դէմ-դիմաց ընկած են երկու սիրուն բլուրներ. ահա նրանց կրծքերի վրայ փռուած են Վերին—Խօյգանի այգիները, որ ունեն խիստ բանաստեղծական տեսք և աւելի գեղեցկութիւն են տալիս գիւղին։

Գիւղի հիմք գցողներն եկած են Հին—Զուղայի Խօյ գիւ-